# **2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ**
# **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

**Պետական մարմինը՝** *Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով*

**Հայտի հաստատման ամսաթիվը՝**

## 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանձնաժողովի գործունեության գլխավոր նպատակակետը ազատ տնտեսական մրցակցության ապահովումն է տնտեսության զարգացման, երկրի առաջընթացի և քաղաքացու բարօրության համար: Հանրային շահի առաջնայնության գաղափարը դրվում է որոշումների կայացման հիմքում:

Հիմք ընդունելով տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները՝ տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և վերահսկողության իրականացման գործընթացում 2026-2028 թվականներին իրագործման համար Հանձնաժողովը սահմանել է հետևյալ նպատակները.

- Երկրի համար ռազմավարական, սոցիալական նշանակություն ունեցող պարենային և ոչ պարենային նշանակության 9 ապրանքային շուկաների (ոլորտների) մրցակցային իրավիճակի գնահատման ուսումնասիրություն, ուսումնասիրության ամփոփ արդյունքների հրապարակում,
- Սպառողների պաշտպանության օրենսդրության զարգացմանը ուղղված համատեղ միջոցառումների (օրենքների փոփոխությունների նախագծերի մշակում, ենթաօրենսդրական ակտերի ընդունում և այլն) իրականացում,
- Սպառողների շահերի պաշտպանության ոլորտում հասարակական կազմակերպությունների դերի ակտիվացում, ոլորտում գործող կազմակերպությունների կարողությունների զարգացում
- Սպառողների շահերի պաշտպանությանը վերաբերող խնդիրների լուծման ամբողջական համակարգի ձևավորում՝ ներառյալ խնդիրների լուծման այլընտրանքային մեխանիզմների ստեղծում,
- Դպրոցական և արտադպրոցական կրթության մոդելներում սպառողների շահերի պաշտպանության և սպառողների իրավունքների մասին բովանդակության մշակում և համապատասխան կրթական ծրագրերում ներառում,
- տնտեսական մրցակցության և սպառողների շահերի վերաբերյալ օրենսդրության հարցերում հասարակության տեղեկացվածության ապահովման աջակցություն, քարոզչությանն ուղղված աշխատանքների ուժեղացում,
- տնտեսական մրցակցության և սպառողների շահերի վերաբերյալ օրենսդրության հարցերով տնտեսավարող սուբյեկտների իրավագիտակցության մակարդակի բարձրացում,
- Կրթական համակարգում մրցակցության պաշտպանության ակադեմիական ծրագրերի ներդրում, աշխատակիցների գիտելիքների կատարելագործում և երիտասարդ կադրերի պատրաստում՝ կադրային ռեզերվի ստեղծում,
- Թվային տեխնոլոգիաների կիրառում Հանձնաժողովի կողմից իրականացվող վերլուծություններում,

- ՀՀ պետական և այլ շահագրգիռ մարմինների հետ մրցակցային արդյունավետ քաղաքականության ոլորտում համատեղ գործողությունների իրականացում:

Հանձնաժողովը, ելնելով իր հիմնական առաքելությունից, իրականացնում է ոլորտային ուսումնասիրություններ, որի նպատակն է բացահայտել ոլորտում մրցակցային իրավիճակը, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերը, մրցակցային իրավիճակի վրա ազդող այլ պայմանները: Ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, հատկորոշում է ապրանքային շուկայի սահմանները, որոշում է ապրանքային շուկայի սուբյեկտների կազմը, ապրանքային շուկայի ծավալները, տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները, ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը, ուսումնասիրում է համապատասխան իրավական ակտերը, պարզում է ապրանքային շուկա մուտքի խոչընդոտների առկայությունը, ինչպես նաև ուսումնասիրում է ոլորտին կամ ապրանքային շուկային առնչվող այլ հանգամանքներ, որոնք կարող են ընդհանուր մրցակցային իրավիճակի, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերի վերաբերյալ եզրահանգումներ կատարելու հնարավորություն տալ:

Ուսումնասիրության նպատակով ապրանքային շուկա ընտրելիս Հանձնաժողովը հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

- Հայաստանի Հանրապետության համար տվյալ ոլորտի կամ ապրանքային շուկայի ռազմավարական նշանակությունը,
- ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը,
- նվազագույն սպառողական զամբյուղում տվյալ ապրանքի տեսակարար կշիռը,
- տվյալ ապրանքային շուկայում մրցակցության օրենսդրության խախտումների ռիսկայնության համեմատաբար բարձր մակարդակը, այդ թվում՝ Հանձնաժողովի կողմից տվյալ ապրանքային շուկայում արձանագրված խախտումների առկայությունը,
- զանգվածային լրատվամիջոցներում առկա հրապարակումները, որոնք հուշում են տվյալ ապրանքային շուկայում առկա հնարավոր հակամրցակցային երևույթների մասին,
- համապատասխան դիմումների առկայությունը տվյալ ապրանքային շուկայում ուսումնասիրություններ իրականացնելու, իրավախախտումներ բացահայտելու ուղղությամբ և այլ դեպքերում:

Հանձնաժողովը 2026 թվականից յուրաքանչյուր տարի իրականացնում է լայն սպառում ունեցող պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների 3 ոլորտի/ապրանքային շուկայի ուսումնասիրություն, որը կազմում է 5 տարվա համար նախատեսված 15 ապրանքային շուկաների 20 տոկոսը:

Ուսումնասիրության արդյունքում բացահայտելով ոլորտում/ապրանքային շուկայում առկա խնդիրները, բացերը և առաջարկելով լուծումներ շուկայի ուղղակի կամ

անուղղակի կարգավորման համար՝ Հանձնաժողովը հաջորդ տարիներին անհրաժեշտության դեպքում անդրադառնում է նույն ապրանքային շուկաներին կամ ընտրում է նոր տվյալ ժամանակահատվածի համար առավել մեծ կարևորություն ներկայացնող ապրանքային շուկա՝ տնտեսության մրցակցային վիճակի բարելավման և Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը գնահատելու համար:

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության իրավիճակը գնահատելու համար իրականացնում է 150 հատ ուսումնասիրություններ՝ Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ ընթացիկ հսկողություն իրականացնելու նպատակով:

Հանձնաժողովի նպատակը ոլորտում ազատ տնտեսական մրցակցության ապահովումն է և վերջնարդյունքում միտված է տնտեսության կայուն զարգացմանը և տնտեսական աճի խթանմանը, որն էլ իր հերթին ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 8 և 9 նպատակների մաս է կազմում:

## 3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ
### 3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

Կանխատեսվող միջոցները ապահովվելու են օրենքով և կանոնադրությամբ սահմանված գործառույթների պատշաճ իրականացումը:

2024 թվականի հունիսի 25-ին Կառավարությունում Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) շրջանակում սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած պարտավորությունների կատարման և այդ համատեքստում իրականացվող իրավական բարեփոխումների վերաբերյալ վարչապետի գլխավորությամբ տեղի ունեցած խորհրդակցության շրջանակներում արձանագրվել է իրավական բարեփոխումների իրականացման գործընթացում Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների ընդլայնման հանգամանքը: Բացի այդ նույն խորհրդակցության ընթացքում ՀՀ վարչապետի կողմից Հանձնաժողովին առաջարկվել է նաև ներկայացնել սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող ԵՄ-ի դիրեկտիվների տեղայնացման և ընդունման արդյունքում պահանջվող նոր հաստիքների համալրման հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովում նախաձեռնվել է մինչև 20 հաստիքի ավելացում, ինչը հավելյալ միջոցներ է պահանջում: Ներկա հաստիքների նկատմամբ մինչև 23% հաստիք ավելացնելու պարագայում Հանձնաժողովի կողմից կատարված նախնական հաշվարկների Հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակում և վերահսկողություն» միջոցառման 2026 թվականի

ծախսը կավելանա 20%-ով՝ կազմելով 777950,9 հազար դրամ, և այլընտրանքային ծախսային առաջարկում կներկայացվի որպես Սցենար 3:

## 8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հանձնաժողովի 2025 թվականի հաստատված բյուջեն կազմում է 594371,8 հազ. դրամ:

2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվում է համապատասխանաբար՝ 648292,4 հազ. դրամ (2026թ), 653884,5 հազ. դրամ (2027թ), 658171,4 հազ. դրամ (2028թ):

2026-2028 թվականների համար «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված ծախսի կանխատեսման հիմքում դրված են Հանձնաժողովի հաստիքային միավորներից յուրաքանչյուրի գծով անհատական հաշվարկները, ինչպես նաև հաշվի է առնվել քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձերի բնականոն աճը:

«Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսվել է հավելյալ 16444,8 հազար ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ 2026 թվականի համար առաջարկվող 41097,0 հազար ՀՀ դրամը չի բավականացնի հանձնաժողովի անդամների պարգևավճարների վճարմանը, իսկ հանձնաժողովի գործառույթների ավելացման արդյունքում թափուր հաստիքների նախատեսվող համալրման պարագայում միջոցները չեն բավականացնի աշխատակազմի պարգևավճարների վճարման համար:

«Էներգետիկ ծառայություններ» հոդվածով կանխատեսվող ծախսի հաշվարկները կատարվել են՝ հաշվի առնելով 2024 թվականին էլեկտրաէներգիայի փաստացի ծախսը, որի չափը պայմանավորված էր եղանակային պայմաններով: Ինչպես նաև ծառայողական ավտոմեքենայի փոփոխության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել նախատեսել մարտկոցի լիցքավորման ծախս:

«Ապահովագրական ծախսեր» հոդվածով նախատեսվում է Հանձնաժողովի ծառայողական ավտոմեքենայի պարտադիր ապահովագրություն:

«Գույքի և սարքավորումների վարձակալություն» հոդվածով ծախսը պլանավորվել է վարձակալվող տարածքի մակերեսի և նախորդ տարվա պայմանագրային արժեքի հիման վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N2073-Ն որոշմամբ 2026 թվականի հունվարի 01-ից դադարեցվելու է Հանձնաժողովի պահպանությունը, անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու պահնորդական ծառայություն, որի արժեքը նախատեսվել է «Արտագերատեսչական ծախսեր» հոդվածով՝ կատարված հարցումներից հայտնի դարձած միջին արժեքի հիման վրա:

Հանձնաժողովի ներկայացրած ներքին գործուղումների քանակը պայմանավորված է կանխատեսվող ստուգումների, դիտանցումների, հսկիչ գնումների, դատական նիստերի թվով:

Հանձնաժողովի ներկայացրած արտասահմանյան գործուղումների քանակը հիմնավորվում է տարեկան կտրվածքով ստացված հրավերների, մի շարք միջազգային կառույցներին անդամակցելու, օտարերկրյա մրցակցային մարմինների հետ երկկողմ գործընկերության շրջանակներում տարբեր միջազգային միջոցառումներին մասնակցելու կարևորությամբ: Վերոնշյալ համաժողովներին մասնակցությունը հնարավորություն է ընձեռում անմիջականորեն մասնակից լինել միջազգային տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործընթացին, խթանել մրցակցության օրենսդրության կիրարկման մեխանիզմները, միջազգային հանրությանը ծանոթացնել Հանձնաժողովի՝ վերջին տարիների ձեռքբերումներին, ինչպես նաև ստանալ մրցակցության քաղաքականության կիրարկման ոլորտում նոր գիտելիքներ և փորձ: Վերոնշյալ միջոցառումներին մասնակցությունը կարևորվում է նաև Հանձնաժողովի հեղինակության բարձրացման և ամրապնդման, ինչպես նաև միջազգային հարթակներում ներգրավվածության ապահովման տեսանկյունից:

Հարկ է նշել, որ ֆինանսական միջոցների սղության հետևանքով Հանձնաժողովը հնարավորություն չի ունենում մասնակցել մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հարցերով հարցերով բազմաթիվ համաժողովների, սեմինարների, աշխատանքային քննարկումների՝ առաջնայնություն տալով հետևյալ միջոցառումներին.

- Հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի սկզբին դարձել է «Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանց» (International Consumer Protection and Enforcement Network/ICPEN) կազմակերպության գործընկեր: 2 տարի շարունակ ICPEN կազմակերպության աշխատանքներին, համաժողովներին և աշխատանքային խմբերի քննարկումներին ակտիվ մասնակցությունը հնարավորություն է ընձեռում Հանձնաժողովին դառնալ կազմակերպության անդամ:

Հանձնաժողովն ընդգրկված է Կազմակերպության հետևյալ աշխատանքային խմբերում.

- Առցանց մարկետինգ,
- Մարմնի գործունեության արդյունավետություն,
- Արհեստական բանականություն

Համաշխարհային հարթակին մասնակցությունը հնարավորություն է տալիս անմիջականորեն մասնակցել սպառողների պաշտպանության ոլորտում ծագած խնդիրների լուծման համաշխարհային գործընթացին, ինչպես նաև միջազգային հանրությանն իրազեկել Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող զարգացումների մասին:

Հարկ է նշել, որ ICPEN-ի հարթակի մասնակիցը դառնալու և հարթակից օգտվելու համար յուրաքանչյուր տարի անհրաժեշտ է վճարել տարեկան վճար՝ ըստ

Համաշխարհային բանկի՝ յուրաքանչյուր երկրի համախառն ազգային եկամուտի և ՄԱԿ-ի մարդկային զարգացման ինդեքսի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մասնակցել ICPEN-ի կազմակերպած առնվազն 2 համաժողովի և 2 աշխատանքային հանդիպման, ինչպես նաև յուրաքանչյուր տարի վճարել ICPEN-ի հարթակի վճարը:

➢ Եվրասիական տնտեսական միության անդամակցության շրջանակներում Հանձնաժողովը համագործակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Մրցակցության հարցերով բլոկի հետ: Այն համակարգում է ԵՏՀ մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման հարցերով Կոլեգիայի անդամը (Նախարար): Տարին 2 անգամ տեղի է ունենում ԵԱՏՄ անդամ պետությունների հակամենաշնորհային/մրցակցային մարմինների ղեկավարների եւ ԵՏՀ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերով Կոլեգիայի անդամի (Նախարարի) մակարդակով 5+1 ձեւաչափով անցկացվող խորհրդակցությունը, որին անպայման պետք է մասնակցի Հանձնաժողովը:

➢ Հանձնաժողովն անդամակցում է ԱՊՀ հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ), որի ներքո գործում են Գովազդի կոորդինացիոն խորհուրդը և Սպառողների շահերի պաշտպանության հարցերով խորհրդատվական կոմիտեն: Յուրաքանչյուր տարի կայանում է ԱՊՀ հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի 2 նիստ, գովազդի կոորդինացիոն խորհրդի 2 նիստ և սպառողների շահերի պաշտպանության հարցերով խորհրդի մեկ նիստ: Ֆինանսական միջոցների սղության հետևանքով Հանձնաժողովը մասնակցում է միայն ԱՊՀ հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի նիստերին:

➢ ԱՊՀ հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի անդամակցության շրջանակներում յուրաքանչյուր տարի ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայությունը կազմակերպում է Միջազգային իրավաբանական համաժողով, որտեղ քննարկվում են Խորհրդի մասնակից պետություններում մրցակցության արդի հիմնախնդիրները և մրցակցության ոլորտում գրանցված ձեռքբերումները: Հանձնաժողովը, որպես Խորհրդի անդամ, մասնակցում է վերոնշյալ համաժողովին:

➢ Հանձնաժողովը 2001 թվականից հանդիսանում է Մրցակցության միջազգային ցանց կազմակերպության (այսուհետ՝ ՄՄՑ) անդամ: ՄՄՑ-ը տարին մեկ անգամ հրավիրում է համաժողով՝ ուսումնասիրելու եւ գնահատելու նախորդ տարիների արդյունքները, նախագծելու հետագա աշխատանքային գործունեության իրականացման ուղիները, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատանքային խումբ կազմակերպում է կոնկրետ թեմաներով համաժողովներ: Հանձնաժողովը ֆինանսական միջոցների սղության պատճառով մասնակցում է միայն ՄՄՑ տարեկան համաժողովին, որի նպատակն է ուսումնասիրել և գնահատել նախորդ տարիների արդյունքները, նախագծել հետագա աշխատանքային գործունեության իրականացման ուղիները:

Հանձնաժողովը հետևյալ աշխատանքային խմբերի անդամ է հանդիսանում.

- Միաձուլումներ,
- Շահերի պաշտպանություն,
- Միակողմանի վարքագիծ աշխատանքային խմբեր

- Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հետ (ՏՀԶԿ/OECD): Յուրաքանչյուր տարի կայանում է ՏՀԶԿ Մրցակցության հարցերով համաշխարհային համաժողով, ինչպես նաև բազում աշխատանքային հանդիպումներ և մրցակցության վերաբերյալ սեմինարներ ու համաժողովներ: Ֆինանսական միջոցների սղության պատճառով Հանձնաժողովը մասնակցում է միայն ՏՀԶԿ Մրցակցության հարցերով համաշխարհային համաժողովին:
- Հանձնաժողովն համագործակցում է ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (UNCTAD) հետ և առնվազն տարին մեկ անգամ մասնակցում Ժնևում կայանալիք Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ տարեկան համաժողովին:
- Հանձնաժողովը համագործակցում է «Ամերիկայի իրավաբանների ասոցիացիա» կազմակերպության/ABA հետ և տարին մեկ անգամ մասնակցում ABA-ի կազմակերպած համաժողովին:
- Հանձնաժողովի և արտերկրի մրցկացային մարմինների միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում տեղի են ունենում աշխատանքային այցեր համապատասխան երկրներ (Լեհաստանի հանրապետություն, Իտալիայի Հանրապետություն), ինչպես նաև ստացվում են բազմաթիվ հրավերներ՝ մասնակցելու արտերկրի գործընկեր մրցակցային մարմինների կազմակերպած միջոցառումներին:
- Կորեայի արդար առևտրի հանձնաժողովի հետ համագործացկության շրջանակներում յուրաքանչյուր տարի ստացվում է հրավեր մասնակցելու Հարավարևելյան ասիական ազգերի ասոցիացիայի, ԱՊՀ անդամ երկրների մրցակցային մարմինների ղեկավարների և Կորեայի արդար առևտրի հանձնաժողովի համատեղ միջոցառմանը:
- Հանձնաժողովը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության շուկաների կարգավորման պետական մարմինը նախատեսում են Չինաստանում կայանալիք միջազգային համաժողովի շրջանակներում ստորագրել մրցկացության ոլորտում Փոխըմբռնման հուշագիր:

Հանձնաժողովի թվային կարողությունների զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ուղղությամբ Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» շրջանակում 2020 թվականի մայիսի 7-ին կնքված թիվ PSMP3-CS-2-2-19 պայմանագրով Հանձնաժողովի համար մշակվել է e-Compete էլեկտրոնային համակարգը (այսուհետ նաև՝ Համակարգ):

Համակարգն այսօր հանդիսանում է Հանձնաժողովի գործունեության կազմակերպման առանցքային գործիքը, որը ներառում է մի քանի փոխկապակցված բաղադրիչներ, այդ թվում՝

- ինտերակտիվ պաշտոնական կայք,
- գործերի կառավարման ներքին համակարգ,
- արտաքին օգտատերերի հետ փաստաթղթաշրջանառության հարթակ (e-filing),
- և փոխգործակցություն այլ պետական կառույցների էլեկտրոնային շտեմարանների և Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի հետ:

Համակարգի միջոցով թվայնացվել են Հանձնաժողովի բոլոր հիմնական գործընթացները՝ ներառյալ վարույթների իրականացումը, որոշումների ընդունումը, ոլորտային ուսումնասիրությունները և ամբողջ փաստաթղթաշրջանառությունը: Դրա հիմքում ընկած տվյալների կառավարման կառուցվածքն ապահովում է խորը վերլուծություն, ռիսկերի գնահատում, տնտեսավարողների վարքագծի վերլուծություն և կանխատեսելիության բարձր մակարդակ:

Համակարգում ներդրված Microsoft Power BI գործիքակազմի շնորհիվ հնարավոր է ձևավորել վերլուծական աղյուսակներ և գեներացնել հաշվետվություններ՝ թե՛ ներքին կառավարման, և թե՛ հանրային թափանցիկության նպատակով: Նշենք, որ հենց այս գործիքի միջոցով է Հանձնաժողովի կայքում հրապարակվում լայն սպառման ապրանքների գների ամենօրյա դինամիկան խոշոր առևտրային ցանցերում:

Սպառողների շահերի պաշտպանության ոլորտում Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնման շրջանակում, 2024 թվականին e-Compete համակարգը համալրվել է նոր՝ «Սպառողի Օգնական» թվային գործիքով, որը նախատեսված է սպառողների անհատական խնդիրների արագանց լուծման նպատակով: Այս գործիքը հնարավորություն է տալիս քաղաքացիներին՝ առանց բարդ ընթացակարգերի, ներկայացնել իրենց բողոքը, որը անմիջապես համակարգից փոխանցվում է տնտեսավարող սուբյեկտին: Տնտեսավարողն ունի 14-օրյա ժամկետ արձագանքելու համար, իսկ պատասխանի բացակայության կամ ոչ բավարար պատասխանի դեպքում սպառողը համակարգում կարող է մեկ հպումով տեղեկացնել Հանձնաժողովին՝ վերջինիս կողմից հետագա հնարավոր քայլերի քննարկման նպատակով:

Համակարգը նաև ինքնաշխատ կերպով ուղարկում է ծանուցումներ և հիշեցումներ, ապահովում է վարույթ սկսելու նախադրյալ ազդակներ՝ առանց բարդ փաստաթղթային ընթացակարգերի:

Այս գործիքի ներդրումը ոչ միայն տեխնոլոգիական առաջընթաց է, այլև պետություն–սպառող վստահության ամրապնդման կարևոր գործիք: Այն օգնում է կանխել խնդիրները նախքան դրանց խորացումը, նպաստում է բիզնեսի պատասխանատու վարքագծի ձևավորմանը և պաշտպանում է սպառողի շահերը՝ մատչելի և պարզ եղանակով:

Հարկ է նշել նաև, որ «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազման, էլեկտրոնային

փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման եվ կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը, ինչպես նաև քրեակատարողական, պրոբացիայի, փրկարարական եվ էկոպարեկային ծառայողների կատարողականների գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի N1510 որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում)՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերը կազմվում, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրվում, հաստատվում, էլեկտրոնային համակարգով կատարողականները գնահատվում և կատարողականների հիման վրա պարգևատրվում են պետական ծառայողները:

Ներկայումս Հանձնաժողովի e-Compete համակարգը նման հնարավորությամբ չի համալրվել, և այս բացը խոչընդոտում է նշված իրավական ակտի պահանջների լիարժեք կատարմանը: Հաշվի առնելով ինչպես Համակարգի ռազմավարական կարևորությունը, այնպես էլ վերջինիս միջոցով գործարկվող նոր գործիքների՝ մասնավորապես «Սպառողի Օգնականի» բարձր պահանջարկն ու զգայուն բնույթը, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված կատարողականի գնահատման պահանջների աճող արդիականությունը, անհրաժեշտ է ապահովել Համակարգի ամբողջական տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև աշխատանքային ծրագրերի մուտքագրման և կատարողականների գնահատման նոր մոդուլի մշակումը և ներդրումը, դրա հետ կապված այլ փոփոխությունները, ինչպես նաև Քաղաքացիական ծառայության գրասենյակի էլեկտրոնային համակարգի հետ փոխգործելիությունը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովի կողմից կատարվել է նմանատիպ ծառայությունների շուկայի ուսումնասիրություն, որի համաձայն՝ Համակարգի սպասարկման և արդիականացման համար անհրաժեշտ գումարը կազմում է ամսական 1,0 մլն. ՀՀ դրամ (ընդամենը 12,0 մլն. ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը):

«Տեղեկատվական ծառայություններ» հոդվածի շրջանակներում նախատեսվում են թվային տպագրության ծառայություններ:

«Կառավարչական ծառայություններ» հոդվածով նախատեսվում է աուդիտի ծառայությունների ձեռքբերում:

«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածի շրջանակներում նախատեսվում են լաբորատոր փորձագիտական ծառայություններ: Հաշվի առնելով շուկայական տնտեսությանը ու հատկապես ՀՀ-ում տնտեսության ճյուղային կառուցվածքին բնորոշ առանձնահատկությունները, այդ թվում՝ մի շարք ապրանքային շուկաներում համակենտրոնացման բարձր մակարդակը, վստահաբար կարող ենք ասել, որ իրականացվող հետազոտական աշխատանքների հրատապությունը և արդիականությունը կասկած չեն հարուցում: Ելնելով առկա իրողություններից, ինչպես նաև երկրի ու հասարակության զարգացման անհրաժեշտությունից՝ տվյալ փորձագիտական աշխատանքները անհրաժեշտություն են: Նույն տնտեսագիտական

հոդվածով նախատեսվում է գնումների գործընթացի կազմակերպման և տարեկան հաշվետվության դիզայնի ծառայությունների ձեռքբերում, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1666-Ն որոշումը՝ այլընրանքային եղանակով իրականացվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման նախատեսում (տաքսի ծառայության ձեռքբերում):

«Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով նախատեսված է Հանձնաժողովին ամրացված ավտոմեքենայի նորոգման և լվացման ծառայությունների ձեռքբերում: Նմանատիպ ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից կատարվել է հաշվարկ՝ հիմք ընդունելով ավտոմեքենայի տարեկան միջին վազքը և պարտադիր տեխնիկական սպասարկումը, որին ավտոմեքենան ենթակա կլինի յուրաքանչյուր մեկ տարվա վազքից հետո: Լվացման ծառայության արժեքը հաշվարկվել է ծառայությունը մատուցող կազմակերպությունների կողմից ստացված գնային առաջարկների հիման վրա: Բացի այդ, նույն հոդվածի շրջանակներում պլանավորվում է այլ ծառայությունների ձեռքբերում, ինչպիսիք են Հանձնաժողովի կողմից շահագործվող էլեկտրական, պատճենահանող, համակարգչային սարքերի, օդորակիչների, հսկողության համակարգերի նորոգման և պահպանման ծառայությունները:

«Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով ծախսերի պլանավորումը կատարվել է՝ հիմնվելով նախորդ տարվա փաստացի ծախսի վրա, ինչպես նաև ելնելով տոներային քարթրիջների ձեռքբերման անհրաժեշտությունից:

«Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով ծախսերի պլանավորումը կատարվել է՝ ելնելով անհրաժեշտ կենցաղային ապրանքների քանակից ու արժեքից:

«Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով պլանավորված գումարով նախատեսվում է իրականացնել հսկիչ գնումներ՝ տնտեսվարող սուբյեկտների մոտ «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումները բացահայտելու նպատակով: